

**5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

**5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված ԱՄՀ Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)**

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 2011թ. հունվար-հունիսին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 9 ցուցանիշների վերաբերյալ.

**1. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի**

(1000 մարդ)

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
2010 թ. հուլիսի 1-ի դրությամբ	3254.6	1675.2	1579.4
2011 թ. հունվարի 1-ի դրությամբ	3262.6	1679.0	1583.6
2011 թ. հուլիսի 1-ի դրությամբ	3266.4	1680.5	1585.9

**2. Ք.Երևանի և ՀՀ մարզերի բնակչության կյանքի սպասվող տևողությունը հաշվարկված ծննդից, ըստ սեռի 2010թ.<sup>1</sup>**

(տարի)

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ
<b>Հայաստանի Հանրապետություն</b>	74.1	77.2	70.6
ք. Երևան	74.3	77.3	71.0
Արագածոտն	72.7	74.0	69.5
Արարատ	72.8	75.8	69.8
Արմավիր	73.2	75.7	70.6
Գեղարքունիք	72.7	74.7	70.7
Լոռի	71.7	75.0	68.2
Կոտայք	72.6	75.3	69.8
Շիրակ	70.6	73.8	67.3
Սյունիք	73.4	76.4	70.5
Վայոց ձոր	73.4	75.2	71.5
Տավուշ	73.8	76.9	70.5

**3. Մանկական մահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)**

(1000 կենդանի ծնվածի հաշվով)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2010թ. հունվար-հունիս	12.3 <sup>◇</sup>	10.3 <sup>◇</sup>	14.0 <sup>◇</sup>
2011թ. հունվար-հունիս	13.0	11.0	14.7

<sup>1</sup> Տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը միջին հաշվով կապրի, պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մեկ տարիքից հաջորդին անցնելիս մահացությունը՝ յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:

**5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

**4. Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)**

*(1000 կենդանի ծնվածի հաշվով)*

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ
2010թ. հունվար-հունիս	14.3 <sup>◇</sup>	12.1 <sup>◇</sup>	16.3 <sup>◇</sup>
2011թ. հունվար-հունիս	15.0	12.7	17.0

**5. Մայրական մահացության գործակիցը**, 100000 կենդանի ծնվածի հաշվով, 2011թ. հունվար-հունիսին կազմել է 14.9 (3 դեպք)՝ 2010թ. հունվար-հունիսի 4.8 (1 դեպք) դիմաց:

**7. Ուսումնառության միջին տևողությունը** դպրոցներում 2010/2011 ուսումնական տարում կազմել է 11 տարի:

**12. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով** 2011թ. հունվար-մարտին կազմել է 188719 դրամ (515 ԱՄՆ դոլար կամ 377 եվրո):

**14. Գործազրկության (պաշտոնական) մակարդակը** 2011թ. հունիսին կազմել է 6.2%: Ընդ որում, կանանց գործազրկության մակարդակը 2011թ. հունիսին կազմել է 8.5%, իսկ տղամարդկանցը՝ 3.8%:

**15. 2011թ. հունվար-հունիսին տնտեսության մեջ զբաղված է եղել ՀՀ բնակչության 34.6%-ը, այդ թվում կանանց՝ 33.2%-ը և տղամարդկանց՝ 36.1%-ը:**